

Պատվաստանյութեր

թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար

Եթե Դուք ունեք իմունային անբավարարություն, Դուք կարող եք ավելի մեծ դժվարություն ունենալ՝ պաշտպանելու Ձեզ կանխարգելվող հիվանդություններից: Պատվաստանյութերի միջոցով կանխարգելվող որոշ հիվանդություններ կարող են Ձեզ դնել թոքերի լուրջ վարակներ ունենալու ավելի մեծ վտանգի տակ, որը կարող է պահանջել հիվանդանոցային բուժում կամ նույնիսկ մահ առաջացնել:



Պատվաստումներն անվտանգ, արդյունավետ և հեշտ միջոց են կանխարգելվող հիվանդություններից Ձեզ պաշտպանելու համար և հատկապես կարևոր են թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար, քանի որ Դուք ավելի մեծ դժվարությամբ եք բուժվում վարակներից կամ հիվանդություններից: Այնուամենայնիվ, կախված այն հանգամանքից, թե որքան է վնասված Ձեր իմունային համակարգը՝ հնարավոր է, որ Դուք կարիք ունենաք խուսափելու որոշ պատվաստանյութերից կամ սպասեք, մինչև Ձեր իմունային համակարգն ուժեղանա:

Հարցրեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին, թե որ պատվաստանյութերն են Ձեզ խորհուրդ տրվում:

Ո՞ր պատվաստանյութերն են ինձ անհրաժեշտ

- ◆ **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց խորհուրդ է տրվում ստանալ COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի 1 դեղաչափ՝ անկախ դրանից, թե երբ եք արել Ձեր վերջին պատվաստումը: Թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց կարող է անհրաժեշտ լինել 2024-2025 թվականների COVID-19 դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ՝ կախված նախորդ դեղաչափերի քանակից:

Նախկինում **չպատվաստված** անձինք պետք է ստանան թարմացված իՌՆԹ (mRNA) պատվաստանյութի (Pfizer BioNTech կամ Moderna) 3 դեղաչափ կամ Novavax-ի նորացված COVID-19-ի դեմ պատվաստանյութի 2 դեղաչափ:

Այն մարդկանց, ովքեր նախկինում ստացել են բնօրինակ Novavax, անհրաժեշտ է COVID-19-ի դեմ միավալենտ կամ երկվալենտ իՌՆԹ թարմացված պատվաստանյութի 1 կամ 2 դեղաչափ՝ կախված նախորդ դեղաչափերի քանակից:

- ◆ **Գրիպի դեմ պատվաստանյութ:** Սա պետք է ստանաք ամեն տարի, հատկապես աշնանը, որպեսզի նվազեցնեք գրիպով հիվանդանալու հավանականությունը: Եթե Դուք [65 տարեկան](#) կամ ավելի բարձր տարիքի եք կամ 18-64 տարեկան եք և ունեք փոխպատվաստված օրգան և ընդունում եք իմունային համակարգը ճնշող դեղեր, հարցրեք Ձեր մատակարարին ավելի մեծ չափաբաժնով գրիպի պատվաստանյութի մասին:




Պատվաստանյութեր

թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար

- ◆ **Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութ:** 75 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց մեկ դեղաչափը պաշտպանում է շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV): Մեկ դեղաչափ է խորհուրդ տրվում 60-74 տարեկան այն մարդկանց, ում համար RSV-ով ծանր հիվանդանալու վտանգը մեծ է, օրինակ՝ իմունային անբավարարություն ունեցող մարդկանց:
8 ամսականից փոքր երեխաները պետք է ստանան nirsevimab-ի (Beyfortus) մեկ դեղաչափ RSV-ի սեզոնին (հոկտեմբերից մարտ), որպեսզի պաշտպանվեն թոքերի հիվանդություններից: Nirsevimab-ի մեկ դեղաչափ պետք է ստանան նաև 8-19 ամսական այն երեխաները, ում համար շնչառական սինցիտիալ վիրուսով ծանր հիվանդանալու վտանգն ավելի մեծ է և մտնում են RSV-ի իրենց երկրորդ սեզոնը:
- ◆ **Թոքաբորբի դեմ պատվաստանյութ:** Պաշտպանում է պնևմոկոկային բակտերիաների մի քանի տեսակներից, որոնք կարող են առաջացնել լուրջ վարակներ երեխաների և չափահասների մոտ: Մանկական 4 դեղաչափով շարքը խորհուրդ է տրվում մինչև 5 տարեկանը: Ավելի մեծ երեխաների և չափահասների համար խորհուրդները կարող եք գտնել [այստեղ](#):

Ինչպե՞ս ես պատվաստվեմ

- ❖ Այցելեք Ձեր բժշկական մատակարարին կամ դեղատուն:
- ❖ Հարցրեք Ձեր մատակարարին՝ արդյո՞ք Ձեզ խորհուրդ են տրվում հավելյալ դեղաչափեր:
- ❖ Եթե չունեք մատակարար, այցելեք publichealth.lacounty.gov/vaccines՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- ❖ Լավն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում:



Խորհուրդ տրվող պատվաստանյութերի ցանկի համար այցելեք

www.cdc.gov/vaccines



Հանրային Առողջության գանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության գանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր:



Los Angeles County Department of Public Health

ph.lacounty.gov/vaccines

Vaccines for People With Weakened Immune Systems 8/23/24 (Armenian)



COUNTY OF LOS ANGELES
Public Health